

## Հասմիկ ԳԱԼՈՎՅԱՆ

### ՍԱՏԱՆԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՄՆԱՀԱՎԱՏԱԿԱՆ ԶՐՈՒՅՑՆԵՐՈՒՄ

Ժողովրդական գրույցը վիպական բանահյուսության տարածված տեսակներից է: Զրույցները ոչ մեծ ծավալի պատումներ են, մերկրազանի պատմվածքներ, որտեղ ժողովրդական լեզվին բնորոշ պատմելառով ներկայացվում են ժողովրդի պատմական ու կենցաղային անցուղարձերը և սնահավատական պատկերացումները: Սնահավատական գրույցները հերանոսական և քրիստոնեական հավատալիքների հետ կապված ոգեղեն արարածների և գերբնական երևոյթների, առարկաների մասին պատմվող բանավոր պատմություններ են, ոչ հերիաքային արձակ ժանրի ստեղծագործություններ: Վերջիններս իրենց ձևով, բնույթով և կենցաղավարման եղանակով խիստ տարբերվում են վիպական բանահյուսության մեջ մտնող մյուս բոլոր ժանրերից:

Սնահավատական գրույցը պատմողներն ու լսողները հավատում են դրանց բովանդակությանը, ներկայացնում իբրև իրենց և իրենց մտերիմների կամ ծանրքների հետ կատարված իրողություն: Զրույցը պատմվում է ասացողի կամ սասացողին հայտնի մարդու անունից: Սնահավատական գրույցները հիմա ել կենսունակ են և կենցաղավարում են Հայաստանի մի շարք ազգագրական շրջաններում: Սույն աշխատանքը կատարված է 19-րդ դարի 2-րդ կեսից մինչև արդի գրառումներում առկա սնահավատական գրույցների հիման վրա: Հողվածի համար որպես սկզբնաղյուր օգտագործվել են Վերջին տարիներին կատարված բանահյուսական գրառումները, «Ազգագրական հանդես»-ում<sup>1</sup>, «Հայ ազգագրություն և բանահյուսություն»<sup>2</sup> մատենաշարում առկա տպագիր նյութերը, Գ. Մրկանձայանցի<sup>3</sup>, Գ. Հովսեփյանի<sup>4</sup>, Յ. Շանիկյանի<sup>5</sup>, Աղ. Մշիքարյանցի<sup>6</sup>, Ե. Լալայանի<sup>7</sup>, Մ. Աբեղյանի<sup>8</sup>, Մ. Կոայեանի<sup>9</sup>, Վ. Սվազլյանի<sup>10</sup>, Գ. Գյուղայանի<sup>11</sup> և այլոց ժողովածումներում տեղ գտած սնահավատական գրույցները, ինչ-պես նաև Ա. Ղազիյանի հոդվածը<sup>12</sup>:

Մեր օրերում շատ են տարածված գրույցներ չար ոգիներից մեկի՝ սատանայի մասին, և սույն հոդվածում ներկայացվում են սատանա-ոգու գործառույթներն ըստ տարածված սնահավատական գրույցների:

Սատանա բառը ծագում է հին եբրայերեն satan բառից, որը նշանակում է ոստիս, հակառակորդ, քշնամի, հակառակ դիմակաց, չար ոգի, դև: Սատանա բառը փոխառությամբ տարածված է մի շարք լեզուներում՝ ասորերեն satana, ոռսերեն սատանա, սատանա:

<sup>1</sup> Ազգագրական հանդէս, գ. IX, 1902, գ. X, 1903, գ. XII, 1905, գ. XIV, 1906, Թիֆլիս, (այսուհետ 'ԱՀ'):

<sup>2</sup> Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 8, 1978, հ. 10, 1980, հ. 12, 1981, Եր., (այսուհետ 'ՀԱԲ'):

<sup>3</sup> Մրկանձայանց Գ., Երկեր, հ. 1, Եր., 1978:

<sup>4</sup> Գարեգին Մարկարաց Յովսէվեանց, Ժողովրդագրական նիւթեր, գիրք գ, N 56, Փշրամքներ ժողովրդական բանահյուսութիւնից, Թիֆլիս 1892:

<sup>5</sup> Շանիկյան Յ.Կ., Հնուրինը Ալճայ, N 89, Թիֆլիս, 1895:

<sup>6</sup> Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ա, Փշրամք Շիրակի ամբարներից, Աղ. Մշիքարեանց, Սոսկուա-Ակեսանդրապոլ Ռ-3Ծ-1901, (այսուհետ 'ԷՄԺ'):

<sup>7</sup> Լալայան Եր., Երկեր, հ. 1, 1983, հ. 2, 1988, հ. 3, 2004, Եր. (այսուհետ 'ԵԼ'):

<sup>8</sup> Աբեղյան Մ., Երկեր, հ. Է, Եր., 1975, (այսուհետ 'ԱՄ'):

<sup>9</sup> Մեսքրաց Կոայեան, Բարտ, Բարտի Կեամբէն առնուած պատկերներ, յուշեր, չափածոյ քերքուածներ եւ արձակ էջեր, Անդիյաս-Լիբանան, 1965:

<sup>10</sup> Սվազլյան Վ., Կիլիկիա, արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., 1994:

<sup>11</sup> Գյուղայան Գ., Սուսա լեռան ազգագրությունը, Եր., 2001:

<sup>12</sup> Ղազիյան Ա., Հայ ժողովրդական սնահավատական գրույցների դասակարգման հարցի շուրջ, ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1983, N 8, էջ 78:

արարերեն շայտան (Հայրան), եթովպերեն sadatan, հունարեն Satanas, լատիներեն satanas, հարավալսալերեն sotona, գերմաներեն satan և այլն.<sup>13</sup>

Ե. Լալայանը, խոսելով Զավախսքի հայ ժողովրդի հավատալիքների մասին, ներկայացնում է մի ավանդություն սատանա-ոգու առաջացման մասին. «Աստված ստեղծել է ինը դաս հրեշտակ՝ մարդկանու, թափքը, աներևույթը, բարի էակներ, որոնց պաշտամունքն էր փառարանել Երրորդությունը և կատարել նրա հրամանները: Սակայն այս ինը դասից երկուամ ամբարտավանացել են և ցանկացել աստված դառնալ: Տերն անիծել է նրանց, և սրանք երեք օր շարունակ կարկտի պես երկնքից վայր են թափվել: Յոր դաս հրեշտակները խնդրել են ողորմիլ և «Տեր ողորմեա» են ասել, իսկ մարդիկ զարդուրած «Կեցն՝ Տե՛ր» աղաղակել: Այս երկու դասը վայր թափվելիս երեք դասի են բաժանվել, մին՝ Պեղծեռն, որ մնացել է երկնքի և երկրի միջև, մյուսը՝ Սարայել, որ իջել է երկրիս վրա, և երրորդը՝ Լեկեռն, որ անցել է անդունդը: Աստված տնօրինել է, որ այս վայր թափված հրեշտակների տեղը լցնեն բարի մարդկանց հոգիները, ուստի և այս հալածված հրեշտակների երեք դասերն էլ բարի մարդկանց սաստիկ քննամացրել են և ամեն կերպ աշխատում են մոլորեցնել նրանց: Սարայելը «բաց աչքով»՝ ակնիայտնի է խարում մարդկանց ու գրում գործած մեղքերը: Լեկեռնը չար երազներով ու տեսիլքներով է մոլորեցնում, իսկ Պեղծեռնը կտրում է հոգիների ճանապարհը, և եթե «քարության ձեռազիք» չունեն, քաշում տանում է դժոխք, սատանաների ու մեղավորների կայանը, ուր ուկի արոտի վրա նստած թագավորում է Լեկեռնը: Ժողովուրդն այս վայր թափված երեք դաս հրեշտակներին կոչում է սատանա...»<sup>14</sup>:

Նոյն ավանդությունը, որոշ տարբերություններով, հանդիպում ենք Գ. քահանա Նժդեխյանի մոտ. «Աստուած հրեշտակները ստեղծած ժամանակ՝ տասներկու դասի կամ գունդի բաժնեց զանոնք: Այս գունդերն երեքի գլխաւորները՝ Սարահել (Սադայել), Բէհեզդրուղ և Բէլիառ (Բէլիար) տեսնելով իրենց բարձրութիւնը ու փառքը՝ հպարտացան ու Աստուծոյ դէմ ապստամբեցան: Աստուած բարկացավ, և զանոնք իրենց գունդերով իր «Երեսէն»-ներկայութենեն թափեց դեպի Սանդարամնետը՝ ի պատիժ իրենց ամբարտաւանութեան»<sup>15</sup>: Ըստ Լոռու (Բորչարդի զավառ) ժողովրդական հավատալիքների՝ սատանաների գլխավորը համարվում է Բելյարը, որի որդին կոչվում է Սարիել, իսկ աղջիկը՝ Նարմաղուշիկ<sup>16</sup>:

Հայ ժողովրդական սմահավատական գրույցներում սատանա ոգին հիմնականում հանդես է զայխ «սատանա» ընդհանուր անվամբ: Սակայն որոշ ազգագրական շրջաններում (Նոր Նախիջևան, Շիրակ, և այլն) սատանա-ոգուն անվանում են նաև մեզմեն աղեկներ, մեզմից լավեր, քան զմեզ աղեկներ, աղեկանք (Ակն) և այլն: Գր. Գյողայանը գրում է, որ «Մուսալեռում չար ոգուն՝ սատանային, խոսակցության ընթացքում երբեմն «Քան զմեզ աղվեյր» (մեզմից լավը) ասում էին, բայց անունով նրան չին հիշատակում»<sup>17</sup>: Հավանաբար սատանային այսպիսի անվանումը (դու մեզանից լավն ես) տրվել է որպես սիրաշահություն՝ գերծ մնալու համար նրա չարագործություններից: Մ. Աբեղյանը այս առիթով գրում է. «Թեպես սրանք այսպիս մարդկային ծագում ունեն և անզամ աստվածային անեծքի տակ են գտնվում, այդուհանդերձ նրանք վեր են կանգնած մարդկանցից: Դրա համար էլ նրանք հաճախ կոչվում են մեզանե լավեր կամ մեզմեն աղեկներ: Եթե նրանց չարերին հավասար դասեն և չարեր կոչեն, ա-

<sup>13</sup> Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. Դ, Եր., 1979, էջ 179:

<sup>14</sup> ԵԼ, հ. 1, էջ 215-216:

<sup>15</sup> ԱՀ, գ. IX, էջ 267:

<sup>16</sup> ԵԼ, հ. 3, էջ 209:

<sup>17</sup> Գյողայան Գ., Աշուածություն, էջ 230:

պա նրանք կզայրանան և վրեժխնդիր կլինեն»<sup>18</sup> (ընդգծումը մերն է-Հ.Գ):Արցախում, Սյունիքում, Վարանդայում սատանան ու քաջը նույնանում են<sup>19</sup>: Հարք-Բուլանըխում ու Համշենում սատանային փերի<sup>20</sup> են կոչում, նաև ալ<sup>21</sup>, իսկ Ղզլարում՝ աշը<sup>22</sup>:

Ե. Լալայանը սատան-ողու աներևույթ լինելու հանգամանքը բացատրող մի զրոյց է ներկայացնում. «Երբ Զրիստոսի մայրն ու մոռաքույրը (Եղիսարեր) Փրկչի գեռեզմանի վրա ողբում էին՝ զլոխները քաշ զցած և առանց շորջը նայելու, սատանաները, որ մինչև այդ ժամանակ մարդկանց մեջ էին ապրում և նկատելի էին, կամնայով սրանց ուշքը ուրիշ բանի վրա դարձնել, որպեսզի նոռանան Տիրոջը, պարկերի մեջ պլուծ ամաններ էին ածել և նրանց առաջ կանգնել, թխկթխնկացնում էին: Աստվածածինը ես է նայել և տեսնելով սատանաներին՝ անիծել է, թե՝ «աներևույթք ըլիք», և այդ օրվանից նրանք աներևութացել են, այլև մարդկանց չեն երևում»<sup>23</sup>:

Հայաստանի տարրեր ազգագրական շրջաններում զրառած հայ ժողովրդական սնահավատական զրույցներում սատանան ունի արտաքին տեսքի զրեթե միևնույն նկարագիրը, իհարկե, առկա են նաև տարրերությունները: Ըստ շիրակցիների՝ սատանան «մարդու պես է, հմա մարդ չէ, ինքը սև, երկու չաքալ կոտոշ ու մանտր բիզ-բիզ անկազներ ունի, պոչը բարակ ու կեռ է, ոսները բարս, ոսից զլոխ փոշոտ մազի մեջ կորել է, մանտր բգով ծակած աչքերը կրակ զլմանի...»<sup>24</sup>: Չափախքում սատանային պատկերացնում են «մարդակերայ, թևակոր, բոլորովին սև, մազով ծածկված, երկար ազիտվ, կրունկները դեախ առաջ ուղղված, ոմանք էլ մի կամ երկու եղջյուրով»<sup>25</sup>: Ըստ ալաշկերտցիների «սատանաները թև չունին, որովհետու քափած են անոնք, երբ Աստուած իր երեսէն վար ճգեց, բայց իրեշտակներու պես կրնան ամեն տեղ այնիւ ու ել և էջ ընել, իրեշտակներու արագութեամբ: Իրենց տեսքը, կերպարանքը չափազանց տգել է, սև, խաւարապատ, դուրս ցցուած ու բարակ այտերով, քըով ու շրբունքներով: Բարակ ու փոքր են նույնական ձեռքերը, ոսքերը: Կրունկները դեախ առաջ, և ոսքի ճիւր ու մատները դէախ են դարձած: Ունին նաև բարակ ու երկայն պոչ՝ վտիտ կրնակի վրայ ողորուած, ինչպէս կտեսնու պատկերներու մեջ: Այս այլանդակությունները ստացած են Աստծու անեծքով»<sup>26</sup>: Մոնաշեցիների պատկերացմանը նույնական սատանան «մարդու կերպարանք ուներ, մազերը ցից-ցից, կոտոշակոր էր, պոչակոր և մի քիչ կուզիկ, ոսքերը բարակ, կազմվածքը՝ անճոռնի: Նրանք մեկը նյուսից չեն տարբերվում»<sup>27</sup>:

Ազգագրական որոշ շրջաններում իրարամերժ կարծիքներ ու պատկերացումներ կան սատանայի սեռի ու տարիքի վերաբերյալ: Արդեն նշվել է, որ սատանան նախկինում իրեշտակ էր, իսկ իրեշտակները, դարձյալ ըստ ժողովրդական պատկերացուների, ավելի շատ արականի հանգամանք ունեն, քան իգականի, չունեն մահ, ծնննդ, ակարություն<sup>28</sup>:

Չափախցիների պատկերացմանը սատանաները երկու սեռի են, որդենությամբ աճում ու բազմանում են, երբեք չեն մնունում<sup>29</sup>: Իսկ Ալաշկերտում լրիվ հակառակ

<sup>18</sup> ԱՌ, հ. Է, էջ 86:

<sup>19</sup> ՀԱԲ, հ. 12, էջ 63: ԵԼ, հ. 2, էջ 177: Ա. Ղազիյան, նշվ. աշխ., էջ 78:

<sup>20</sup> Արվանձոյան Գ., նշվ. աշխ., էջ 45:

<sup>21</sup> ԱՀ, գ. XIV, էջ 137:

<sup>22</sup> ՀԱԲ, հ. 10, էջ 66:

<sup>23</sup> ԵԼ, հ. 3, էջ 209:

<sup>24</sup> ԷԱԺ, էջ 168:

<sup>25</sup> ԵԼ, հ. 1, էջ 216:

<sup>26</sup> ԱՀ, գ. IX, էջ 267-268:

<sup>27</sup> Գյոզայան Գ., նշվ. աշխ., էջ 230:

<sup>28</sup> ԱՀ, գ. IX, էջ 265-266:

<sup>29</sup> ԵԼ, հ. 1, էջ 216:

պատկեր ենք տեսնում. այստեղ սատանաները «իրեշտակներու պես աւելի արականի հանգանանք ունին, քան իզականի, թէև յաճախ կնոջ կերպարանքով կը յայտնովին, և այն աւելի պառաւ կնոջ: Չպետք է շփոթել վերիները սատանաներու հետ, որովհետև առաջիններու ծագումը շատ ուշ եղած է, կրնան կենակցի մարդերու հետ և զաւակներ ունենալ, սատանաները գորկ են այդ յատկութիւննեն, ոչ ծնունդ ունին, ոչ մահ, ոչ հիւանդութիւն և ոչ մարմնական աճում, ոչ կուտեն և ոչ կը հագնեն: Ասոնք իրեշտակներու նման հաճախ իրաշագործ են»<sup>30</sup>: Ղզլարցիների պատկերացմանը, եթե սատանան դեմքով տղամարդ էր, նրա ոտքերը սմբակավոր պիտի լինեին, եթե կիմ՝ պոչ և երկար մազեր՝<sup>31</sup>: Մուսալեռցիները սատանաներին պատկերացնում էին միշտ չափահաս տարիքում, ծեր կամ երեխա չկար: Ակզրից ինչքան որ եղել են, նույնն էլ մնում են, այսինքն՝ աճ չունեն: Սարդկանց հետ ոչ մի կարգի (սեռային և այլ)<sup>32</sup> կապ ու առնչություն չունեն<sup>33</sup>: Ակնում «աղեկանք սովորաբար ի կերպարան կնոջ»<sup>34</sup> են հայտնվում:

Արճակում սատանաները երեխաներ ունեին, որոնց պուպուշիկներ էին անվանում: Վերջիններս պատկերացվում էին թխամորք, խիստ-զանգրահեր, հաստապոշ, ճրազի նման փայլուն աչքերով, զգզզված հանդերձներով մանուկներ<sup>35</sup>: Ծիրակում ևս սատանաները երկու սեռի են, հազվադեպ հանդիպում ենք տղամարդու, իսկ հաճախ՝ կնոջ կերպարանքով: Ըստ շիրակցիների սատանան մոտ քառասուն-քառասունինգ տարեկան արարած է, չի ծերանում: Ծիրակում մեր կատարած բանահյուսական գրառումներում սատանան հիմնականում կին է, միշտն տարիքի, աշխատասեր, քայլու, համեստ արարած: Զրույցներից մեկում սատանան ներկայացվում է նորաշենցի ժենոյի կերպարանքով. «Մեր գեղի (Նորաշեն, Արդիկ) Ալիկենց Ենովը Եզանլարա (Արեշատ) ջախճքան էր: Էղիկ մենակ ջաղաճը կեղնի, էդ օրը աղուն աղցող չի եղնի, նստած կսպասէ: Կըսէ, մեզ է աշեմ, օր ջաղաճի քարի տրգեն, էն փեռն օր կրֆրոցն չուրը, բդոր տրգեն հարսնիք գելնի, եղնադ: Կսէ, էզան, բոլորս բըռնին ու խաղցան: Ես, կըսէ, փշաքաղվա, տեսա, օր մեզը մազերս կքաշե, մեզը հ'անգանս կքաշե, մեզը ոդով կզարգէ, կըսէ, քովս մե բուզավկեմ կար (առաջ զադայախան են հակե, կոճակ, բուզավկա է էղե վրեն), հանի ու զարգի մեզի դոշին: Սադ փախան, ըսիկ բըռու կայնավ: Լացավ, ըսավ վոռքը էրեխա ունիմ, բող տուն էրթամ: Կըսէ չէ, հ'անգանս քաշողը դու չէ՞իր: Դե, ընզի եղենս, տուն բդի էրթանք: Կերթա, ջաղաճը կիփազէ ու բդոր բերեզը տուն, կըսէ, ելեք, քածա կընիք եմ բերե ընձի: Գելնին կաշեն, օր մարդ, մարդու լման, մեր գեղի Թերոյենց Վարդի լմանը, մենակ ողները, կըսէ, կըրընգները մադներու տեղն էին, մադները՝ կըրընգներու: Ուրիշ հեշ մե տարբերություն չկար, նույն մարդը: Բերեզը տուն: Կընիզը՝ Տիրունը, կըսէ, դէ այ Ենովը, կըսէ, էրեխանց մեջը բան-ման չտարածես, օր վախենան, ես առավողը սաղին կիսավաքեմ, կբացատրեմ, օր բսիկ չարք է, գործ չունիք հետքը: Ինչ օր ինքը կենե՛ հազարազր բդի բսես իրան, չբդի բսես՝ էրա՝ կե՛ք, բդի բսես՝ մի՛ էրա, մի՛ կեր, օր էնէ: Էղոր իրեք տարի կպայեն. գոմերը կալվեր, կովերը կկթեր, կաթը բերեր վերոյուղ կուղար, անուն, կըսէ, հեշ մե բառ չէր խոսի, ինչ օր իրան կհասնիր,

<sup>30</sup> ԱՀ, գ. IX, էջ 268:

<sup>31</sup> ՀԱԲ, հ. 10, էջ 66:

<sup>32</sup> Ուստի բանահյուսության մեջ սատանան զայրակղում է կնոյք, մղում նրան ինքնասպանությամ...: Յ. Պոմերանցևա, Միֆոլոգические персонажи в русском фольклоре, Մ., 1975, стр. 122.

<sup>33</sup> Գյողայան Գ., նշվ. աշխ., էջ 231:

<sup>34</sup> Ճանիկեն Յ.Կ., նշվ. աշխ., էջ 152:

<sup>35</sup> ՀԱԲ, հ. 8, էջ 89:

հնըք զիդեր, գելներ, կեներ: Կերտար որադ կնսուեր, կրսէ, մենք հացը կուդեհնք, գելնիր իրա ձեռով կլցներ, իշկան օր իրան պետք էր, կուդեր, ամանը կլվար, բղըն-գով կ ըսպես պրոռունզը կօարդեր, տանիր կդներ տեղը: Մե օրը Ենովքը հարսնե-րին կրսէ՝ ելե՛ք, գնացե՛ք կալը, տունը կմնան 11 տարեկան ախճիզն ու սադանեն: Սադանեն գելնի, տեղը կշինե, ճաշ-մաշ չի եպէ, ինքը բդակես բաների հետ գործ չու-ներ: Ախճիզը ջուր կդնե վեղորոյով, օր իրա դբրոցի շորերը լվա, սադանեն կրսէ կթողա՞ս ողներս լվամ, բսիզ կսէ, դե՛հա: Կսէ, փեշիս բոլորը բուլավկա, ասել կա շարած, քանե՞ս, օր ողներս ջծագրուտ: Էս ախճիզը չի զիդենա, իստակ քանե, քանե քիմի, գելնի կրսէ. Իշկան ալուր ունենաք, տարին քատուն մեշոկ ալուր բերեր՝ շա-նադր հալդի տները ման զա, դարդակ մնա, իշկան աման-չաման ունենաք՝ պոռունզ չունենա, ձեզի բսեն «Չկոց տունե, ու անհայդանազը: Ախճիզը գելնի ճվագը՝ հար-սի՞կ, հարսի՞կ...: Ժենյա կեղնի անունը, եղ մարտը չիդեմ ինչ լեզվով հարցընեզը՝ անունըդ ի՞նձ է, էսիզ հողի վրա մարով զրեզը՝ ժենյա, ժենիզ, բշտը Թերոյենց Վարդի լմանն էր, Վարդն է ժենիզ կզրվեր: Էս ախճիզը լալով կերտա կալը, կրսէ, դե՛ք, բելեր, ժենոն չկա, հարսիկը չկա: Գուկան տուն օր՝ դայրեն գեղնին քցած, ասեղներն էլ սեղնին շարած: Տիրունը քաշէ ախճզան՝ լավ կծեծէ: Իշկան օր ես զի-դեմ, ըդոնք չորս տղամարդով կաշխաղէին՝ հաց կմուրային, իշկան օր սիպտրկե-դեն կունենային ծալած, դարսած, քանային, կտեսնեին, օր սադ արուն էր, սադանե-կը տանեին արնոդէին, բերեին դնեինզը տեղը: Իշկան բաժակ կար՝ պոռունզը չկար, գրալ՝ պոռունզը չկար, շերեփ կար՝ պոչը չկար, վեղոր կար՝ կանտերը չկար: Զի-դեշողները կրսեին, թե էս ի՞նչ վերանա տուն է, կրսեին՝ մեր վրա անեծք կա: Տի-րունին անիձել էր սադանեն, օր էրեխին ծեձել էր, բսել էր՝ սադ կյանքդ կորերդ վրա չզան, էնիկ սադ կյանքը աշկերը բաց քնավ: Բոյով, սիրուն հարս էր, ութ տա-րեկան էի, կիշենի, ինքը չեր կրոնա ինքնուրույն իրա վրի ասեղները հաներ, բոլորը ժնջիլ քաշեիր կլոր՝ չեր կրոնա միմեն դուրս զար, բոյզ կապվիզը, մոլորիզը: Էդ էլ սադանի պատմությունը, հըբը՝»:<sup>36</sup>

Կիմ-սատանայի ծննդաբերության ժամանակ հաճախ մարդ-դայակ են խարում տանում, որին և վարձատրում են սոխի կամ սիստորի կեղլով ու հալվայով: Սո-խի կամ սիստորի կեղլոները մյուս օրը ոսկի դրամներ են դատնում, եթե միայն ստացողն անարգելվ վայր չի քափել<sup>37</sup>: Այս հավատալիքը տարածված է հիմնականում Զավախ-քում<sup>38</sup>, Կիլիկիայում՝ Հաճընում<sup>39</sup> և մյուս ազգագրական շրջաններում:

Սատանային վերագրվող մի հատկանիշ ընդհանուր է բոլոր ազգագրական շրջանների գրույցներում. սատանայի ոտքերն ու լեզուն բարս են: Ամեն ինչ անում է իրեն ասվածին, իրանայվածին հակառակ: Ստ. Լիսիցյանի մեկնաբանմաք «սատա-նան ամեն ինչ աշխատում է շուր տալ, բըրսըցնել, չարով խափանել ամեն ինչ: Իզուր չէ, որ նրա ոտքի բաթերն էլ են շուր տված՝ կրունկներն առաջ, մատները՝ ետ: Քաշըն ամեն ինչ բարս ու հակառակ է անում: Եթեն պետք էր նրան ջրի ուղարկել, ապա «ջուր բեր» ասելու փոխարեն պետք էր ասել՝ «կուժը վերցրու և ջարդի»<sup>40</sup>:

<sup>36</sup> Սեր բանահյուսական գրառումներից: Բանասաց՝ Սերվենիկ Կամսարի Ազատյան, ծնվ. 1932թ, Արքիկի շրջան, զյուղ Նորաշեն, ջուղիակ:

<sup>37</sup> ԵԼ, հ 1, էջ 216:

<sup>38</sup> ԵԼ, հ. 1, էջ 218:

<sup>39</sup> Սվազյան Վ., մշտ. աշխ., էջ 78:

<sup>40</sup> ՀԱԲ, հ. 12, էջ 64:

Սատանայի բնակության վայրի և մարդկանց երևալու հարցերին վերաբերող տարրերությունները կապված են տվյալ ազգագրական շրջանի բնակչությական պայմաններից, աշխարհագրական դիրքից ու տեղակայրերից: Առավել հարթավայրային շրջաններում առկա գրույցներում սատանաներն ապրում են չարդախներում, ջրհորներում, քանդված տներում, վառարանների մեջ, պատերի խոռոչներում, անտառում, գերեզմանատանը, մոր անկյուններում,<sup>41</sup> առուների եզերին<sup>42</sup>, ջրաղացներում, ձիթհանքերում, գոմերում, այրերում և անմարդաբնակ տներում<sup>43</sup>: Մուսա լեռում «նրանք բնակվում էին խավարում, նրանց կենտրոնն էր Գարիզը (փապուղին)»<sup>44</sup>: Արճակում ավանդություններ կան գրառված սատանաների բնակավայրերի մասին: Այստեղ ևս պատկերացնում էին, որ սատանաներն ավելի ազատ ու համարձակ ապրում էին բնակավայրերից հեռու ընկած ավերակներում, մոր ու անմարդաբնակ տեղերում, սակայն ավանդությունը պատմում է, որ «ամենուրեք բնակվող սատանաներն Արճակում ունեին նաև իրենց հատուկ բնակավայրը: Դա զյուղից հեռու, վերևի մասով Աստվածածնա բլուրներին հասած, իսկ ցածի մասով՝ Զնձեմ կոչվող արտերին հասնող բլուրներից մեկի մեջտեղը եղած խոր, քարքարոտ, երկայն կիրճն էր, որը կոչվում էր Գյազնա: Ահա այդ Գյազնան սատանաների բնակավայրն էր: Լեռնային ճնհալներից գոյացած և իր անցած ճանապարհին պարզված մի փոքրիկ առվակ էր հոսում այդ կիրճի միջով: Վերը կիրճի մեջ, կար մի տեղ, որ շատ նեղ էր, և ջուրը ոչ բն հոսում, այլ վիժում էր ցած: Ջրվեժի այդ մասը կոչվում էր Գյազնի խտինչք, ուր գրույցի համաձայն, անհամար սատանաներ էին աղմկում, հազար ու մի ծայնով ողբում ու կաղանձում: Ո՞չ հովիվներն ու գառնարածներն էին այնտեղ հոսոր քշում, ո՞չ կանայք ու աղջկներն էին Գյազնեն բանջարի գնում, ոչ էլ անցորդներն էին գնում սատանայարնակ Գյազնայով: Ըստ արճակցիների՝ Գյազնի խտինչքը միշտ էլ լիբու էր անխորտակելի շարքերով, որոնք շատ հետու վայրերից հալածվել եկել էին քարնվելու Ասպածածնա գորությունից ու պատսպարվել Գյազնի խտինչքի մեջ: ... Պապերից եկած երկյուղախառն պատումներ կային այն մասին, որ երբ մուրն ընկնում է, Գյազնի մեջ ապրող անհամար շարքերը հազար ու մի սատանայական հնարանքներով խարում են միայնակ ուղևորներին, տանու Գյազնի խտինչքը և այնտեղից քաշում դժոխք: Որդոց-որդի ամրացած այս երկյուղը ստիպում էր դաշտում աշխատող կանանց մուրն ընկնելիս չանցնել Գյազնի ծորաբերանով...»<sup>45</sup>: Արճակում սատանայարնակ էին համարվում նաև զյուղի հարավ-արևելքում գտնվող Վարակյա տներ կոչված ավերակները<sup>46</sup>:

Ե. Լազայանը վկայում է, որ «Դռնավարգի և Քառասանի, ինչպես և Ազոխի և Թաղարի (Արցախ) միջն կան խոր ձորեր՝ սաղարթախտ ծառերով ծածկված: Այս ձորերը կոչվում են Քաջկաձոր և լի են քաջքերով՝ սատանաներով»<sup>47</sup>: Ըստ դարարադցիների՝ քաջքերը (սատանաներ) «ամենուր են՝ ջրում, օդում, ժայռերի մեջ, հատկապես մոր անձավներում ու ժայռածերպերում, լրված ջրադաշներում ու ավերակներում: Ավետարանոց զյուղում, մելիքական դարադամներից վեր քարձրացող մուտքը տանում է քարանձավ՝ քաջկատը»<sup>48</sup>: Իսկ «Նավախան զյուղի Ակործանը պատմում էր, թե մի օր մի սատանա խարել է իրեն և տարել սատանաների տունը ցույց տվել: Այդտեղ, ասում է նա, եղել է մի գեղեցիկ մուշտակ, մի յարա (երկժամի) և մի կույտ ածուխ: Երբ նա հե-

<sup>41</sup> ՀԱԲ, հ. 10, էջ 66:

<sup>42</sup> Կոպյեան Մ, Աշվ. աշխ., էջ 582:

<sup>43</sup> ԵԼ, հ. 1, էջ 216:

<sup>44</sup> Գյողայան Գ., Աշվ. աշխ., էջ 231:

<sup>45</sup> ՀԱԲ, հ. 8, էջ 88-89:

<sup>46</sup> Նոյմա տեղում, էջ 89:

<sup>47</sup> ԵԼ, հ. 2, էջ 177:

<sup>48</sup> ՀԱԲ, հ. 12, էջ 63:

տաքրքրվելով հարցրել է, թե ինչի համար են այդ բաները, սատանան պատասխանել է, թե մուշտակը նրա համար է, որ առավտոր ձգեն եկեղեցի գնացող ծերութիւնների վրա, որպեսզի տաքրությունից բռվանան ու եկեղեցի չգնան, յարան՝ որ ձգեն չարը տեսնող և բարու ետևից զնացող երիտասարդների պարանոցը, իսկ ածոխը՝ բան իրենց ասածը ուրացողի երեսը»<sup>49</sup>.

Սատանաները հայտնվում են մարդկանց մենակ կամ խմրով, երեկոյան ժամերիմ՝ մուբա ընկած ժամանակ։ Ըստ մուսավեռցիների՝ սատանաները «մարդուն երեք խմրով չեն ներկայանում։ Ոչ էլ խմրված մարդկանց էին երևում»<sup>50</sup>։ Հայտնվում են միայնակ մարդկանց, հավանաբար այն պատճառով, որ մեկին ավելի հեշտ է մոլորեցնել ու գցել իրենց բակարդը։ Իսկ Ակնում հավատում էին, որ «Մեզմէ աղեկները սովորաբար կանանց կ'երևան»<sup>51</sup>։

Ըստ հայ ժողովրդական սնահավատական գրուցներում առկա պատկերացումների՝ սատանա բռնելու երեք հիմնական տարրերակներ կան։ Ի մի բերելով գրավոր աղբյուրներում և զրական ստեղծագործություններում առկա նյութերը, կատարված արդի գրառումները՝ բազմիցս հանդիպում ենք ձիու վրա կուպր քսերու եղանակով սատանա բռնելու տարրերակներ։ «Օճունում Օսանք, Արդվինում Դավիթ քյոխանք, Շահալինում Քոչնանց Քոչարը նկատել են, որ իրենց գոմերում ձիերը գիշերը սաստիկ քրտնում են, և նազերը հյուսած են լինում։ Կուպր են քսում ձիերին և բռնում մի-մի սատանա, յոթական տարի աշխատեցնում, հետո արձակում։ Սրանք հեռանալիս մի բան էին խնդրել իբր վարձ իրենց յոթ տարվա ծառայության, սրանք էլ մի-մի բռու մնխիր էին տվել, այս պատճառով էլ սրանց տներում երբեք մնխիր չի լինում՝ սատանաները հավաքում, տանում են։ Սի նույնանման դեպքից հետո արդվեցի Օքարանք ջուր են տվել, և մինչև այժմ էլ սրանց տանը ջուրը բարաքյաք չունի, որքան էլ բերեն՝ մի քիչ հետո ջրանում է։ Իսկ Շնոր գյուղում Շամինենց տանը, գրալ երբեք չեր մնում։ Սի օր տեսնում են, որ մի կին եկավ և գրալները հավաքեց, ուզում է տանի։ Տան տղամարդը սրտոտ է լինում. վրա է վագում, մի հատ խփում, վայր ձգում կնոջը, թե՝ այդ որ ես տանում մեր գրալները։

-Չեր պապը այդ մեզ է տվել,- պատասխանում է կինը և անհետանում։ Նոր հարցուփորձ են անում, իմանում, որ իրենց պապն էլ մի սատանա է բռնած եղել, յոքը տարի աշխատեցրել և վերջը մի գրալ նվիրել»<sup>52</sup>։ Այս տարրերակը ընդհանրական է ազգագրական բոլոր շրջանների համար։

Սյուսը՝ սատանայի մագերը կտրելու եղանակով իրենց ենթարկելու տարրերակն է։ Ուզունլար գյուղում Գորգնանց պապը օջախի մոտից սատանա է բռնում, մազերից մի քիչ կտրում, պահում է։ Երբ յոքը տարին լրանում է, սատանան աղաչում է, որ իր մագերը իրեն տան՝ զնա։ Սրանք էլ տալիս են»<sup>53</sup>։

Երրորդը՝ սատանային ասեղու բռնելու տարրերակն է։ Այս տարրերակը ամենատարածվածներից է և հանդիպում ենք բոլոր ազգագրական շրջաններում առկա գրուցներում։ Ակնում հավատում էին, որ «աղեկնաքները չեն բռնուիր, բայց երեւ մէկը յաջողի անոնց միոյն կրնակը կամ ծեռքը չհասած կամ չզիտցած տեղ մը ասել մի շուլթել (կարել), չը կրնար վախչիլ, և ասելն շուլլողն ինչ որ ուզէ անկեց՝ կրերեն որիշ կնկան մը սնտուկեն»<sup>54</sup>։

<sup>49</sup> ԵԼ, հ. 2, էջ 177:

<sup>50</sup> Գյողայան Գ., Աշվ. աշխ., էջ 230:

<sup>51</sup> Ճանիկեան Յ.Կ., Աշվ. աշխ., էջ 152:

<sup>52</sup> ԵԼ, հ. 3, էջ 210-211:

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 210:

<sup>54</sup> Ճանիկեան Յ.Կ., Աշվ. աշխ., էջ 153:

Սատանայի՝ որպես չար ոգու գործառույթներից մեկը նրա անեծքն է իրեն բռնող, երեք կամ յոթ տարի անվարձ աշխատեցնող մարդուն ու նրա ընտանիքին: Քանասացները հաստատում են, որ սատանաների անեծքները (դառը դատեք, դատարկ նստեք, տանդ հացը կամ ջուրը պակասեն, տանդ մոխիքը պակասի, ամրողական բաժակ, գրալ, ափսե, կճուճ, շերեփի կամ դրայլ չունենաք, աչքերդ բաց քննես, ձեր տունը դեքը պակաս չըլլի) մինչև օրս էլ այդ ընտանիքների վրա են: Սակայն գրույցներից մեկում «Յոթ տարին լրանալիս սատանան դառնում է դեպի Անանյանք և ասում. «Բ՞նչ իհմար մարդիկ եք, յոթ տարի մնացի ձեզ մոտ, չհարցրիք՝ ինչու ջորին չի ծնում, որ ասեի», և անհայտանում է»<sup>55</sup>: Համաձայն մեկ այլ գրույցի՝ սատանան իրեն «կապանքներից ազատող» աղջկան խփում է, «աղջիկը կը դիվահարի, ինքը կխսփանվի»<sup>56</sup>:

Սատանաների կննցաղում լայն տարածում ունի հարսանիքը, շատ են այդ բեմայով գրույցները: Տարբեր ազգագրական շրջաններում տարբեր գունավորումներ են ստանում հարսանիքի հետ կապված մանրամասնությունները՝ սկսած հագուստից, երաժշտական գործիքներից մինչև ճոխ ու առաստ սեղանները: Մարդը, իհմնականում ջրաղացպանը, հովիլը, միայնակ, պատահական անցորդը կիսաքուն կամ արքուն վիճակում հանկարծ լսում է դիոլ-զուռնայի ձայն, ականատես է լիսում ուրախ հարսանիքի, ինքն էլ ականայից կամ ստիպողաբար ներգրավվում է հարսանիքի մեջ: Ըստ հայտնի գրույցների՝ սատանաները շատ են սիրում հազմել մարդկանց, իհմնականում նորահարսների զգեստները և մասնակցել հարսանիքի: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է զգեստը հանելու ժամանակ խաչակներել<sup>57</sup>, Հիսոս Քրիստոս ասել կամ մեջը նշխարը դնել: Զրույցներից մեկում Ուստա Արքն սատանայի հարսանիքում նվազելիս նկատում է, որ դրանց հազին իրենց հարեւանների հազուստներն են, մեկական կտոր կտրում է շորերից, առավոտյան համեմատում է և համոզվում, որ շորերը սատանաներն էին հագել: Կշտամբում է հարեւաններին, թե ինչու հանվելիս Հիսոս ու Քրիստոս չեն ասում, որ սատանաները իրենց «հալավները» չտանեն<sup>58</sup>:

Չավախքում գրառած մի գրույց մանրամասն ներկայացնում է սատանայի հարսանիքի և հյուրասիրության մի փայլուն օրինակ. «... Քիչմ անցավ՝ մեմ ա դակուլ-գուտնի ձեն էկավ... Ետև նստան օր հաց ուտեն, ինծի հետ էկող մարդը մեն մենծ լանգյառիմ՝ փլավ լցեց բերեց ինծի, օր ուտեմ: Անորի փորս վեց-վեց կենե, վրա ընկա, օր ուտեմ: Չանչ կզարնեմ, տանիմ կը բերանս, կաշեմ՝ բան չկա, փորս բան չի երթա, ըլլի օր, ըսի, քունս զլոյս է, չեն կրնա ուտեն, աշքերս սրբեցի, զյառ-զյուլամիշ էղա, աշեցի օր փլաֆը ալի անպես զլսած առաջս է: Ավում զարկի, տարա բերանս, ծանմեմ կը, կենա բերանս բան չկա: Աշեմ՝ անոնք հավար-հավար կուտեն: Ալ ամոքուս ձեն չհանեցի: Մե քիչմ անցավ, ան մարքը լյանգառովմ՝ թիրիք բերեց: Ըսի՝ աս լավ է, մսերը կտոր-կտոր կառնեմ, կոծեմ կը, բյարիք բերանս բանը՝ նտնի: Առա մսի կտորը, տարա բերանս, ծամեմ կը, ակոեքս իրար կը դիպչի, ցորեն հատիմ չափ բան ա փորս չի երթա: Չարասրգ բերանս սրբեցի, անորի ծառակ եւս քաշվա, անոնք կերան, խմեցին, էլան քիչմ ալ քոան ու քաշվան զնացին»<sup>59</sup>:

Սնահավատական գրույցներից և ազգագրական նմանատիպ նյութերից հայտնի է, որ սատանաները սնվում են իհմնականում հալվայով, խավիծով, ծննդլանների փայծաղով՝ լարդով: Մ. Արելյանը ներկայացնում է մի գրույց, որտեղ սատանա-

<sup>55</sup> ԵԼ, հ. 2, էջ 177.

<sup>56</sup> ՍԱ, հ. Է, էջ 89:

<sup>57</sup> Ուստ բանահյուսության մեջ ևս տարածված է այն պատկերացումը, որ սատանան տանում է այն ամենը, ինչը օրինակ չէ: *Պոմերանչեա Թ.В., Միֆологические персонажи в русском фольклоре, М., 1975, с.т. 119.*

<sup>58</sup> ԵԼ, հ. 1, էջ 218.

<sup>59</sup> ԵԼ, հ. 1, էջ 225:

ներն «իրենց հարսանիքներին մեկի երինջն են մորքում, խորովում և ոտում, իսկ լուսարեմին նրանք միացնում են կաշին ու ուկորմերը, և կենդանին ողջ-առողջ տուն է վերադառնում։ Դրա մեկ ոտքն է սովորաբար միայն կաղ մնում, քանզի նրանց հարսանիքն երավիրված և իրենց եւս ուսող-խմող երաժիշտը կամ սափրիչը մի ոսկը է գործանում, որպեսզի ստուգի կենդանու եւս նրա ունեցած նույնությունը»<sup>60</sup>։

Խավիծ եփելու համար դնում են կրակին մի կաթսա և շորջը պտտվելով ասում. «Չքին եղն ու այսուրը մեջը, չին եղն ու այսուրը մեջը»։ Կարսան լցվում է ունեցող, բայց շոնիմ ասողների յուղով ու այսուրով, որը և եփում ուսում են։ Բայց նրանք ավելի մարդկանց եփածին են վազում և ուր էլ որ խավիծ եփեն, սրանք գլխին կանգնած են։ Եվ որպեսզի համեղ մասն իրենց մնա՝ նրանք տակն են պահում յուղը և քույլ չեն տալիս «գրուս տալու», այսինքն՝ երեսը տարածվելու, սպասելով, որ դրգալը վայր դնեն, իրենք վերցնեն ուսեն։ Մարդիկ էլ այդ իմանալով՝ առանց դրգալը վայր դնելու մի սուս են խոսում, օր. Դուրսը սատիկ կրիվ կա, սատանաները խարվում, վազում են դուրս, այս ժամանակ յուղը դուրս է տալիս, և մարդիկ վերցնում ուսում են»<sup>61</sup>։

Զավախքում պատմում են, որ մայր սատանան բերում է քեհու տղոցկան կնոջ ջիզյարը, «քյապապ» անում ու կերցնում երեխաներին։ Գիշերը չուրում մնացած մեկը, լսելով սատանաների գրույցը, ներս է մտնում նրանց մոտ, մի բուռ մոխիր վերցնում, տամում է քեհենց սոսն, դեմ տալիս մեռած կնոջ քիչն, կինը կենդանամնում է<sup>62</sup>։ Ծննդկանի կամ նորածին երեխայի ջիզյարը կամ փայծաղը հաներու և վերջիններին մահ բերելու մոտիկը տարածված է Զավախքում, Շիրակում, Ապարանում, Վայոց Ջողում, Արցախում, Նոր Նախիջևանում, Արճակում, Ալաշկերտում և այլ ազգագրական շրջանների սնահավատական գրույցներում։

Սատանան մարդուն մոլորեցնելու, իր շար մտադրություններն իրականացնելու համար բազմաթիվ հնարքներ գիտի և դիմում է դրանց։ Աներևույթ լինելուց բացի (այս հաճամանքը նրա չարագործություններն իրականացնելու հիմնական գրավականն է) նա հաճախ ստանում է մարդուն ծանոր կամ բարեկամ մարդու, Արցախում՝ այժի, ճանճի<sup>63</sup>, Զավախքում՝ սև շան, մազի<sup>64</sup>, Արճակում՝ մարդու, աղվեսի, գայլի, շան, կատվի, ճանճի, մազի և այլ կերպարանքներ։ Ըստ Արճակում տարածված գրույցի՝ ջիզյար տանելու ճանապարհվող սատանան գյուղին հասնելիս ընդունում էր շան կերպարանք, ծննդկանի տունն էր մտնում կատվի կերպարանքով, ծննդկանին էր մոտենում ճանճի կերպարանքով և ծննդկանի փորձն էր մտնում մազի կերպարանքով, որից հետո արդեն պոկում էր լարդը<sup>65</sup>։ Ըստ Զավախքում գրառած մի գրույցի՝ սատանան չի կարողանում տանել ծննդկանի ջիզյարը, քանի որ նրա վրա կատու էր պառկած, և մոտենանալու պահին աքրորդ կանչում է։ Որոշում է դառնալ մազ, մտնել խավիծի մեջ, կուլ գնալ և ջիզյարը պոկել։ Մարդը, լսելով սատանայի մտադրության մասին, խավիծից հանում է մազը, զցում կրակի մեջ, «ցկելը կիմանա, մեմ՝ ա անպես ճվճվոցն զը-նի, օր աս խեղճ մարդը էրկու անկճով խլնա կը»<sup>66</sup>։ Գ. ք. Նժեկեյանը, խոսելով Ալաշկերտում գրառած հավատալիքների մասին, գրում է. «Երկրի երեսի վրա գտնվածները (սատանաները) հետանուտ են միշտ մոլորեցնել մարդերը և շար գործեր տալ, մտնելով անոնց խղճի, հոգիի, սրտի, փորի և ուղեղի մեջ, կամ ազդելով ատոնց վրայ, յաճախ

<sup>60</sup> ԱՍ, հ. Է, էջ 88:

<sup>61</sup> ԵԼ, հ. 1, էջ 216:

<sup>62</sup> Նոյն տեղում, էջ 219:

<sup>63</sup> ՀԱԲ, հ. 12, էջ 63-64:

<sup>64</sup> ԵԼ, հ. 1, էջ 217:

<sup>65</sup> ՀԱԲ, հ. 8, էջ 88:

<sup>66</sup> ԵԼ, հ. 1, էջ 220:

երևալով մարդուն այլև այլ կերպարանքով, իրապուրիչ տեսքով ու լեզվով, մինչև որ մեռնի մարդը»<sup>67</sup>:

Ինչի՞ց է վախենում սատանան, և ի՞նչ անի մարդը սատանայի չարագործություններից զգուշանալու և դրանցից խուսափելու համար: Այս երկու հարցերի պատասխաններն առկա են բազմաթիվ սմահավատական գրույցներում և ազգագրական նյութերում:

Ծիրակում կարծում էին, թե «Մարդ ուր էրքայ՝ սատանեն հետը կրպտրոտի, չունիք մենծ անդամ է: Էղտեղ է, որ շատ անգամ կը տեսնիս՝ դարտակ բանիմ երմար մարդ զարկէ զարկուի ու մենծ դավի դառարա կը հանէ, չունիք սատանեն կրողը նատած միշտ կը բռքէ, թե դիմջ մի մնայ...: Էղտեղից էլ ջոկ, ջրի՝ եա թե չէ իշքու (Խմիչք) ամանը կիսատ բողիք թե չէ՝ վայն էկաւ քեզի տարաւ: Են սիարին սատանեն եա ոտները պաի մեջը կախէ՝ եա թե չէ մեջը մտնի լողանայ... ել ահուց չէ՝ օր մէր բեմբուրատ Գեորք թե՛ ջաղացը, թե՛ ծիրիհանցը, թե՛ զոմի մէջ, թե խարապա տեղըն օր քնելու էղնի, եօրդանի վրէն՝ եա թե չէ եախին՝ կոտրած մենծ ասեղըն կը շուլըէ, օր ինչ է՝ սատանեն իրան չմուտնայ: Ե՛հ ջանրմ, մարդ սատանի ո՞ր մեկ բանն ըսե. հազար ըռանգ սատանութեն զիտէ. ընդուր հախից զալ ե՞ր կեղնի...»<sup>68</sup>:

Արձակում սատանայի գոյությանը հավատում էր զրեքն ողջ բնակչությունը: Ըստ արձակցիների պատկերացման՝ «սատանաներն ամենուրեք էին և խանգարում էին մարդկանց: Դրանց հաղթահարելու միջոցը խաչակնքումն էր և Հիսուս Քրիստոս ասելը: Պետք է խաչ քաշվեր խսորի, ալյուրի երեսին ու նոր միայն բերանը փակվեր: Պանիրը ամանի մեջ շարելիս պետք է անպայման սկզբից մի մեծ կսոր պանրի վրա խաչ նշան և նոր դրվեր ամանի մեջ և այլն: Բնոյր տեսակի ուստեիքներն սկզբից ու վերջից կա՞ն խաչ պետք է կրեին, կա՞ն խաչակնքում, որպեսզի սատանաները դրանց բարաքյաթը չտանեին: Խսկ ամեն տեսակ ուստեիքի ձեռք տալիս, այսինքն՝ մեծ ամանից ուստեիք վերցնելիս պետք է «Խոսու-Քրիստոս» մրմնջային: «Խոսու-Քրիստոս» պիտի մրմնջային զիշեր ժամանակ (մանավանդ մքան մեջ) որևէ շեմք անցնելիս, որպեսզի այնտեղ պահված սատանաները անցնողին չկարողանային խփել...: Բարիքի քշնամի սատանաները Խոսու-Քրիստոսի անունը լսելիս իբր կործանվում են»<sup>69</sup>:

Ըստ Սու. Լիսիցյանի Լեռնային Ղարաբաղում մարդիկ «Զգուշանում էին, որ զիշերը ոչ ոք չկռանա ու ջուր չխմի առվից կամ առյուրից՝ չինի թե քաշքը քաշի, զցի ջուրը և խեղոյի, այդ է պատճառը, որ կոանալուց առաջ պետք է խաչակնքել (Սոս գ.): Չեր կարելի արևամուտից հետո փոխարինաբար մաղ, կշեռ, կրակ տալ, այլապես դրանց հետ կամ ունեցող առարկաներն ու պաշարները կկորցնեին իրենց բարիքը (բարաքյաթը) և արագ կսպառվեին, քաշքը դրանք կրոցներ տնից: Զգուշանում էին, որ մայրամուտից հետո չի կարելի տունն ավելի, թե չէ հանկարծ կղիմաշեին սատանային: Եթե խիստ անհրաժեշտ էր ավելի, ապա պետք էր ավելից ծղորտ կոտրել ու զցել կրակը: Նույն պատճառով չեր կարելի տաք ջուրը բափել գետնին, այլ պետք էր մեկ այլ ամանի մեջ լցնել (Թաղլար գ.): Չեր կարելի աղքը շեմքի մոտ բափել, քանի որ այնտեղ քաշքըն են նստած լինում»<sup>70</sup>:

Ապարանցի կամայք նույնպես զիշերը բակը ջուր չեն բափում, որովհետև «ջուրը կարող է բափուել չարիքի սեղանի վերայ և նորա վրեժ կրիանեն «սև վարոցով» հարուածելով: Պառաներից մեկը հետևյալ դէպքն էր պատմում այդ մասին.

<sup>67</sup> ԱՀ, գ. IX, էջ 267:

<sup>68</sup> ԷԱԺ, հ. Ա, էջ 170:

<sup>69</sup> ՀԱԲ, հ. 8, էջ 88:

<sup>70</sup> ՀԱԲ, հ. 12, էջ 64:

- Չեկ ժամանակ ջուր տարայ, թափեցի դուս. Քիոեր էր ընդոնց սեղմին, զար-սին գլխու։ Թուխը էրեցին, ասոցուցին։

Զարերը ջրի արանք կպտուին, ասում էր նոյն պառաւը, օր մեկ մարդ ընցնի գիշեր վախտ, անոն Հօր և Որդույ չենի, կզարկին սև վարոցով»<sup>71</sup>։

Ակնում կարծում էին, որ «Աղեկնաքները անվնաս են, բայց երբեմն «չար» կու-տան»։ Երբ մէկն աղեկնաքի մանկան վրայ կրխէ, որ աներևոյթ լինելով չէր կրնար տես-նել՝ մայր-աղեկնաքն «չար» կըտայ կրխող անձին, որոյ ծնուռն կամ այլ անդամն կը ծոփ, խեղանդամ կըլլայ. Կամ կրխող անձն եքեւ որրանին մեջ երեխայ մի ունի՝ աղեկ-նաքն ի վրէժխնդրութիւն՝ նոյն հասակաւ աղեկնաքի տգեղ երեխայ մի դնելով նորա տեղ, կը փոխէ մարդածնին հետ. Կամ նոյն խակ կրխողն կը հիւանդանայ։ Զար արուած անձին՝ «հանտերի է ըռաստ եկերեւ կ'ըսեն»<sup>72</sup>։

Հայտնի է, որ սատանան և չար ոգիներն ընդհանրապես, նախ և առաջ հա-մարվում են ծննդկան կնոջ քշնամի։ Մեր խնդիրն ենք համարում երեկայացնել սատա-նա ոգուց զգուշանալու, նրանից պաշտպանվելու և նրան վախեցնելու համար գործի դրվող հնարքները այնքանով, որքանով դրանք տեղ են գտել հայտնի սնահավատա-կան զրոյցներում։ Ըստ Վերջիններիս՝ սատանան վախենում կամ անհետանում է ա-քաղաքի կաճչից<sup>73</sup>, խոզի անուն լսելիս<sup>74</sup>, կատու տեսնելիս, երկարից, պողպատից, խա-չակնքելուց, հայր ներ ասելուց<sup>75</sup>, Հիսոս Քրիստոսի, Աստվածածնի անունը լսելիս։

Սատանաներից խոսափելու և նրանց վախեցնելու համար բազմաքիլ հնարք-ներ էին բանեցնում հատկապես Արցախում։ Ստ. Լիսիցյանը գրում է. «Քաշկերն ամե-նից ավելի վախենում էին պողպատէ<sup>76</sup> իրերից։ Նա, հավանաբար, կապ ուներ այն հա-մոզման հետ, թե պողպատը (հրահանը) ազգակից է կայծակին, քանի որ քարից կայծ է հանում, ծննդի ժամանակ ծննդկանի բարձի տակ պողպատն և երկարէ իրեր՝ իիկ, դա-նակ, մկրաստ, դաշոյն, կողպեր էին դնում, խակ շնմքին, որտեղ քաշկերն էին նստած՝ շղթա էին զցում։ Նոյնային պողպատն առարկաներ էին դնում և երեխայի բարձի տակ։ Հարասնեկան արջառի (կամ ոչխարի) արյան մեջ քարախված խոփը, դանակը և բանակին էլ համանման նշանակություն ունեին։ Ավագ չարչարանաց շաբարի ուրբար օրը դարբինները պողպատն ողեր էին կրում, որոնք աղջկները դնում էին մատներին՝ քաշկերից պաշտպանվելու համար (Հարութ, Թաղլար և այլ զյուլեր)։ Երեխաների ուսաժապավեններին պողպատն փոքրիկ հրահան էին կարում, որը նրանց պաշտպանում էր չար ոգուց ու կայծակից։ Հավատում էին, որ հենց այդտեղ (թիկունքում) է քաքնվում սատանան։ Հավատում էին, թե ոչ միայն շնչավոր, այլ նաև անշունչ առարկաները քաշկերից պաշտպանվելու համար պետք է դրանց զգեստի գործ-կածքի մեջ ասեղ խրել կամ լայնազուխ մնխեր և կամ պայտ խփել դրանը»<sup>77</sup>։

Սուսալեռում նոյնպես պողպատյա իրերը, հատկապես սուր գործիքները պաշտպանական ուժ ունեին։ «Զարքերը՝ սատանաները, խիստ զգուշանում ու վա-խենում էին կացնից, մանգալից, խոփից, դանակից, սրից, քրից, դաշոյնից, ասելից, քրոցից, շամփուրից և այլն։ Ծննդկանի զիսատակին անպայման մի սուր գործիք (դանակ, մկրաստ) կամ կրծքին ասեղ պիտի լիներ, ինչպես և նորածին երեխայի բարձի

<sup>71</sup> Գարեգին Սարկանագ Յովսէփեանց, էջ 65-66։

<sup>72</sup> Ծանիկեան Յ. Կ., Աշխ., էջ 153։

<sup>73</sup> ԵԼ, հ. 2, էջ 178։

<sup>74</sup> Նոյն տեղում։

<sup>75</sup> ԵԼ, հ. 3, էջ 210։

<sup>76</sup> Սետաղները խորիդամշում են տիեզերական էներգիան՝ կարծ վիճակում։ **Կօրօլէ Կ.**, Էնցիկլոպեդիա սիմբոլու, չնակու, ամօլեմ, Մոսկվա, Էկսմո, Սանկտ-Պետերբուրգ, Terra Fantastica, 2003, ստ. 309։

<sup>77</sup> ՀԱԲ, հ. 12, էջ 64-65։

տակ: Այդ էր պատճառը, որ զյուղի տղաները, գիշերով մի զմեխով կամ շամփուրով զինված, սատանա էին փնտրում: Պետք էր, որ միայնակ լինեին, որովհետև սատանան երբեք բազմության առաջ դրւու չէր գալիս: Հաջորդ առավոտ տղաներն իրար գեկուցում էին, որ ոչինչ չին գտել: Փորձը տարիներ տևեց, բայց ոչինչ չստացվեց: ՈԲչ ահույորեն մուր անկյուններում, պուրակներում և այլրու և ոԲչ էլ աղբյուրներում սատանաներ չին երևում, բայց և այնպես թվում էր, թե դրանք գոյություն ունեն»<sup>78</sup>:

Երվանդ Լալայանը Զավախքում, Արցախում, Լոռիում բազմարիվ գրույցներ է գրանել, որոնք ուշագրավ են բովանդակային առումով և առանձին ու կարևոր տեղ են զբաղեցնում մյուս բոլոր սնահավատական գրույցների շարքում: Սատանայի՝ որպես չար ոգու գործառույթներն այս գրույցներում խիստ տարբերվում են տարածված ու ընդունված կարծիքներից: Այսինքն՝ հայ ժողովրդական սնահավատական գրույցներում սատանան միշտ չէ, որ չարության հատկանիշներով է դրսևորվում: Այդ հատկանիշներից առաջինն այն է, որ սատանան մարդուն արհեստ է սովորեցնում<sup>79</sup>, երկրորդը՝ սատանան օգնում է մարդուն, և երրորդը՝ մարդը հաղթում է սատանային: Լոռիում պատմում են հետևյալ գրույցները, որտեղ սատանան մարդուն արհեստ է սովորեցնում.

«Երբ առաջին անգամ ձիթհանք շինեցին, իսկույն չկարողացան ճեթ հանել: Այս ժամանակ սատանան եկավ նրանց մոտ և խոստացավ սովորեցնել ճեթ հանելու կերպը, եթե իրեն էլ մաս տամ: Մարդիկ չխամաճայնեցին և շարունակեցին փորձեր անել, բայց անօգուտ: Մի օր էլ, երբ սատանան ներս մտավ միևնույն առաջարկն անելու, ձիթհանքի տերը տաք ջուր ուզեց: Սատանան, այս լսելով, բացականչեց.

-Ի՞նչ, զատա՞ր զարդարեցը, տաք ջուրը կտավատի վրա՞ պիտի ածեք:

-Այո՛, -պատասխանեց տերը, - վաղուց արդեն գտել ենք զադտնիքը և կարիք չունենք քեզ մաս տալու»<sup>80</sup>:

Մեկ այլ գրույցում էլ սատանան միամտաբար ասում է, որ ամանները կենում են բամբակով, մարդն իմանում է այս զադտնիքը՝ չխոստվանելով, որ սովորել է սատանայից<sup>81</sup>: «Երբ նշանակած գրույցներում ժողովուրդը սատանային օժտել է այնպիսի դրական հատկանիշներով, ինչպիսիք են բանիմացությունը և միամտությունը:

Սնահավատական գրույցներում երբեմն էլ մարդը դիմում է սատանայի օգնությանը՝ քահանայից վրեժիսնոյիր լինելու<sup>82</sup>, հարստանալու<sup>83</sup>, կուզից ազատվելու<sup>84</sup> և այլ նպատակներով և ստանում է վերջիններիս օգնությունն ու աջակցությունը: Ակնում տարածված էր այն կարծիքը, թե սատանան կարող էր մարդուն բարիք բերել: Պատմում էին, որ «Այս ինչ տանն կանայք երենն երեք օր, երեք գիշեր մոմ բափեր են աղեկնաց տուրքեն, երբ տեսեր են, թե պտուկին ճիրագուն չի հատնիր՝ ամաններ, դաշուններ բերելով իդին հոն քաշեր են: Յիշեալ տանն կանայք, իրենց սնտուկներուն վրայ, Սոլքան Մահմուտի 5-նց և 6-նց դրամնեն դէզարէզ շարուած կը տեսնեն եղեք: Կը վերցնեն դրամները և հետևյալ օրն կը տեսնեն, որ դարձեալ շարուած է: Մէկը հաց կեփեն, կը տեսնէ, որ տունն հացով կը լեցուի և խմորն չսպառիր: Այսպես, աղեկնաք զանազան բարիք կը ընեն եղեք մարդոց: Պետք է զիտնալ, թե ո և իցե պարագայի մեջ, երբ աղեկնաքն շնորհ մ' լնե, պետք չէ բնաւ մարդու ասել, զի շատ մարդիկ երբ շնորհք մը

<sup>78</sup> Գյոզայյան Գ., Աշվ. աշխ., էջ 225:

<sup>79</sup> ԵԼ, հ. 3, էջ 211:

<sup>80</sup> ԵԼ, հ. 1, էջ 216:

<sup>81</sup> Նոյնին:

<sup>82</sup> ԵԼ, հ. 2, էջ 178:

<sup>83</sup> ԵԼ, հ. 1, էջ 223:

<sup>84</sup> Նոյնին տեղում, էջ 220:

վայելած են և մէկու մը յայտնած են՝ անմիջապես նոյն շնորհն դադրած և մինչև իսկ շնորհեալ դրամն ալ եւս առնուած է եղել»<sup>85</sup>:

Կան բազմաթիվ առակներ, անեկդոտներ, սնահավատական գրույցներ<sup>86</sup>, որտեղ ժողովորդը մարդուն ներկայացնում է որպես խարերա, չափազանց ճարպիկ, հնարամիտ, այսինքն՝ «մարդք սատամին ջուրն է տանում, ծարավ հետ քերում»<sup>87</sup>: Այսպիսի գրույցներ հիմնականում պատմում են մոլացիների<sup>88</sup>, կարքեցիների<sup>89</sup>, հատկապես կարքեցի կանանց մասին, որոնց տալիս են «սատանա խարող»<sup>90</sup> անունը:

Հաճախ բանասացները, բուն բանահյուսական նյութը հաղորդելուց բացի, կատարում են ինքնուրույն դատողություններ իրենց իսկ ավանդած նյութի կամ համընդիանուր հարցերի վերաբերյալ և այդ կարծիքները՝ որպես ելակետ, օգնում են ուսումնասիրողներին իրենց վերաբերմունքն արտահայտել ուսումնասիրվող նյութի վերաբերյալ: Մեր պարագայում բանասացը շատ համոզիչ կերպով պատմում է իր իսկ գիտով անցած իրադարձությունը, որը մեր կողմից դիտարկվում է որպես սնահավատական գրույց սատանայի, գոռնափշտիկի կամ մեկ այլ ոգու մասին, և հաջորդ բովելին ասում, որ «Էն վախտ միամիտ էինք, ամեն ինչից վախենում էինք, մեր բոլոր տեսակի վախերը վերագրում էինք սատանաներին: Հըմի մարդն է սատանա դառել, խափում է, սուս է խոսում, սատանան էլ ո՞ւրտից երևա, մարդը սատանու փեշակը ձեռն առել է: Ըդորից է, որ էն վախտ սատանա կար, իրմի չկա»<sup>91</sup>:

Նմանատիպ դատողություն է արել Յ. Շանհիկյանը դեռևս 1895թ. Ակնում բանահյուսական նյութեր գրառելիս. «Կ’ըսեն թե աղեկնաց սկզբնաւորութիւնն յայտնի չէ: Թէ ի հնումն և թե այժմ կան. Պարզամիտ անձններն կը սիրեն և ամոնց միայն կ նրան և զանազան շնորհ կ լնեն. Կ’ըսեն նաև, թե այժմ մարդիկ աւելի սատանայացած լինելով, աղեկնացները չեն երևիր եղել այլ լս»<sup>92</sup>:

Սատանայի կերպարը լայնորեն տարածված է հայ ժողովրդական հեքիաթներում և բանաձևային բանահյուսության մեջ՝ առածներում<sup>93</sup>, հանելուկներում<sup>94</sup> և այլն: «Սատանա» բառը հանդիպում ենք մի շաբթ տեղանուններում<sup>95</sup>, որպես բնության տարերի կամ երևույթի անվանում<sup>96</sup>, նաև հայ ժողովրդական խաղերում<sup>97</sup>:

Սարդը, չկարողանալով բացատրել բնության այս կամ այն երևույթները, չկարողանալով հաղթահարել դրանց նկատմամբ ունեցած իր վախը, երևակայության մեջ ստեղծել է զանազան ոգիներ, նախապաշարմունք, սկսել է հետևել դրանց, վախենալ, զգուշանալ դրանցից, հավատալ, սրբացնել և այլն: Պատահական չէ, որ սնահավատական գրույցները մեծ մասամբ տարածված էին զյուղական բնակավայրերում, ուր

<sup>85</sup> Շանհիկյան Յ. Կ., ճշգ. աշխ., էջ 152-153:

<sup>86</sup> ԵԼ, հ 1, էջ 222-223:

<sup>87</sup> Սալիսասանց Սոռ., Առակներ, ավանդություններ, անեկդոտներ, № 58 (39), Եր., 1958, էջ 90:

<sup>88</sup> FF III:6299, Ա. Բարսեղյան, Ալևի, 1961, Սնկու բանահյուսությունը:

<sup>89</sup> FF II:15, Բղոյան Վ., 1945, Աշտարակ:

<sup>90</sup> Ս. Վարդապետի գրառած նյուրերից: Ասացող՝ Սարիսամ Սովորսյան, ծնվ. 1987թ, 1-ին կուրսի ուսանողություն: Սաստանան տանում է կարքեցիների խոզերը: Սնկն ասում է սատանային, որ միայն իրենը տա, մյուսների հետ ինքը գործ չտնի: Սատանայի այն հարցին, թե որն է իրենը, մարդը պատասխանում է, թե իր խոզի առջը ողորած է: Սատանան տեսնում է, որ բոլոր խոզերի պղերը դորած են, բոլորն էլ վերապարձնում է:

<sup>91</sup> Սնկ բանահյուսական գրառածներից, բանասաց՝ Բարսեղյան Շողակար, ծնվ. 1925թ., Շիրակի մարզ, գյուղ Կապս:

<sup>92</sup> Շանհիկյան Յ. Կ., ճշգ. աշխ., էջ 153:

<sup>93</sup> Ղանապանյան Ա., Առածանի, Եր., 1960:

<sup>94</sup> Հարությունյան Ս., Հայ ժողովրդական համելուկներ, Եր., 1965:

<sup>95</sup> Ղանապանյան Ա., Ավանդապատում, Եր., 1969, էջ 77, 218, 221, 406:

<sup>96</sup> ԱՀ, գ. IX, էջ 46:

<sup>97</sup> Բղոյան Վ., Հայ ժողովրդական խաղեր, Եր., 1980, էջ 60, 139-142:

աշխարհներական հետ կապված հարցերը բացահայտման ու պարզաբանումների կարիք ունեիմ: Ծանաչողության սահմանների ընդարձակման հետ մեկտեղ պակասում են նաև սնահավատական գրույցները:

## ЧЕРТ В АРМЯНСКИ НАРОДНЫХ СУЕВЕРНЫХ РАССКАЗАХ

*Резюме*

*A. Галстян*

В армянских народных суеверных рассказах черт-самый распространенный злой дух. Данная статья представляет функции черта по армянским народным суеверным рассказам. На основе фольклорных записей, собранных в последние годы, и опубликованных статьях, раскрывается и представляется внешний облик черта, его возраст, пол, быт, место обитания, способы излова в различных этнографических регионах.